



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

23 օգոստոսի 2011թ. թիվ 419

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի “ա” ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» թիվ 1769-Ա եւ 23 հունիսի 2011թ. «50 տոկոս եւ ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների ցանկին եւ Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունման ժամանակացույցին հավանություն տալու մասին» թիվ 881-Ն որոշումները՝

Կ ա ղ ա ղ ի ղ ու մ եմ.

1. Լոռու մարզի բժշկական ընկերություններում կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրման աշխատանքները համակարգելու և գործընթացի նկատմամբ շարունակական հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝

Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրման աշխատանքներն իրականացնելու համար բժշկական ընկերությունների տնօրեններին ցուցաբերել մեթոդական օգնություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2011թ. օգոստոսի 23
ք.Վանաձոր